ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

idcarmenia@gmail.com

http://www.foi.am/hy/IDC/

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

«Իրա մեդիքլ գրուպ» ՓԲԸ-ն ընդդեմ «Հայաստանի հանրային հեռուստատեսություն» ՓԲԸ-ի տեղեկատվական վեճի վերաբերյալ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

№ Հ.Ս./02-58/23
«07» մարտ 2023թ.

«Իրա Մեդիքլ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Շանթ Շահնազարյանին

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ավան, Ավան Առինջ 3/8/2

Հարգելի պարոն Շահնազարյան,

Ի պատասխան Ձեր՝ 27.02.2023 թվականի գրության, հայտնում ենք հետևյալը.

Համաձայն «Հանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը:

Սույն կետի բովանդակությունից հետևում է, որ լրատվական գործունեություն իրականացնողից՝ տվյալ պարագայում Առաջինի լրատվական ալիքից, հնարավոր է պահանջել անճշտությունների հերքում, եթե վերջինս հանդիսանում է լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվությունը:

Մինչդեռ, տվյալ պարագայում, քննարկվող դեպքը չի հանդիսանում Առաջինի լրատվական ալիքի տարածած տեղեկատվություն, այլ՝ Առաջինի լրատվական ալիքի «Հարցազրույց Աննա Դանիելյանի հետ» հաղորդաշարի շրջանակներում՝ «Հարցազրույց Նարեկ Մանուկյանի հետ» խորագրով հաղորդմանը հյուրընկալած անձի՝ Նարեկ Մանուկյանի կողմից արտահայտած կարծիք/տեսակետ:

Բացի այդ, հարկ ենք համարում նաև նշել, որ Ձեր կողմից գրությամբ առաջարկվածը որպես այդպիսին չի պարունակում հաղորդման ընթացքում

Երևան, Նորք 0011
Գ. Հովսեփյան 26
Հեռ.՝ +374 10 65 00 15
Էլ. հասցե՝ support@armtv.com

www.ltv.am

հյուրընկալած անձի կողմից տարածած տեղեկատվության հերքում, այլ, այն առավել պարունակում է հաղորդում/տեղեկատվություն՝ «ԻՐԱ ՄԵԴԻԱԼ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ:

Ուստի, հաշվի առնելով վերոնշյալը, և նպատակ հետապնդելով Հեռուստաընկերության գործունեության շրջանակում մշտապես ապահովելու բազմակարծությունը, հայտնում ենք, որ հետագա գործունեության շրջանակում և համապատասխան հնարավորության առկայության պարագայում, կփորձենք անդրադառնալ նաև Ձեր տեսակետին:

Հարգանքով

Գործադիր տնօրեն՝ **Հովհաննես Մովսիսյան**

Կատարող՝
Իրավաբանական բաժին
Իրավաբան
Մերի Մելիքսետյան
Հեռ: 010-65-00-15 /1-20/
Էլ. փոստ: meri.meliksetyan@1tv.am